ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» ապրիլի 2012թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին Բագրատունյաց պողոտայի հ.35 շենքի հ.18 բնակարանի Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 1/4 բաժնեմասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 01.12.2011թ. հ.2848528 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ջուլիետա Միրզոյանին և Կարեն Խաչատրյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բագրատունյաց պողոտայի հ.35 շենքի հ.18 բնակարանը հանդիսացել է Ջուլիետա Միրզոյանի, նրա մոր՝ Աղավնի Գաբրիելյանի, վերջինիս ամուսնու՝ Լեոնիդ Ասատրյանի և Ջ.Միրզոյանի որդու՝ Կարեն Խաչատրյանի ընդհանուր բաժնային սեփականությունը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 22.03.2006թ. հ.1996472 վկայական)։

Համաձայն Ջուլիետա Միրզոյանի դիմումի, Բագրատունյաց պողոտայի 35 շենքի հ.18 բնակարանն ի սկզբանե պատկանել է Ջուլիետա Միրզոյանի ամուսնուն։ Ելնելով այն հանգամանքից, որ Լ.Ասատրյանը չի ունեցել բնակվելու և հաշվառվելու վայր, հաշվառվել է Բագրատունյաց պողոտայի հ.35 շենքի հ.18 բնակարանում և մասնակցել է բնակարանի սեփականաշնորհմանը։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184 հոդվածի համաձայն, ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց, իսկ 1185 հոդվածի համաձայն ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի։ Ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանած այլ դեպքերում։

Տվյալ դեպքում Աղավնի Գաբրիելյանը մահացել է 2002 թվականի հուլիսի 14-ին և նշված բնակարանի նրան պատկանող բաժնեմասը ժառանգաբար փոխանցվել է վերջինիս աղջկան՝ Ջուլիետա Միրզոյանին, իսկ Լեոնիդ Ասատրյանը մահացել է 2007թ. հունվարի 21-ին և չունի ոչ ըստ կտակի և ոչ էլ ըստ օրենքի ժառանգներ։ Լ.Ասատրյանի մահվան հետ կապված ծախսերը հոգացել և հուղարկավորությունը կատարվել է Ջուլիետա Միրզոյանի միջոցներով։

Քանի որ բացակայում է Ջուլիետա Միրզոյանի և ժառանգատուի ազգակցական կապը հաստատող որևէ ապացույց, հետևաբար Բագրատունյաց պողոտայի հ.35 շենքի հ.18 բնակարանի Լեոնիդ Ասատրյանին պատկանող բաժնեմասը հանդիսացել է անժառանգ գույք, որի նկատմամբ Երևան համայնքը ձեռք է բերել սեփականության իրավունք (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 01.12.2011թ. հ.2848528 վկայականը)։

Համաձայն Շենգավիթ վարչական շրջանի 27.02.2012թ. հ.22/01-898ել-379 գրության, Բագրատունյաց պողոտայի հ.35 շենքի հ.18 բնակարանում ներկայումս բնակվում են 5 անձ՝ Ջուլիետա Միրզոյանը, Կարեն Խաչատրյանը (Ջուլիետայի որդին), Կ. Խաչատրյանի կինը և երկու երեխաները։ Բնակարանի ընդհանուր մակերեսը կազմում է 58.8քմ, բաղկացած է երկու սենյակից և չի առարկել Բագրատունյաց պողոտայի հ.35 շենքի հ.18 բնակարանը բնակարանի սեփականատերերին անհատույց օտարելու համար։

Հաշվի առնելով, որ Բագրատունյաց պողոտայի հ.35 շենքի հ.18 բնակարանի մյուս բաժնեմասի սեփականատերեր են հանդիսանում Ջուլիետա Միրզոյանը և Կարեն Խաչատրյանը «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարան անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարան անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ